ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
««ՀԱՂԹԱՆԱԿ» ՇՈՒՐՋՕՐՅԱ ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

<<09>> հոկտեմբեր 2025թ

«ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ -ԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ
Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

««Հաղթանակ» շուրջօրյա խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն ի դեմս՝ Խաչիկ Ղազարյանի և «ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Անժելա Շահջանյանի միջև 2025 թվականի հունվարի 9-ին կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-ԵԽ-1-ՀԿ» պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ. դեկտեմբերի 20-ը:

Սակայն ընկերությունը հրաժարվում է կատարել ստանձնած պարտավորությունները, մասնավորապես 27-րդ չափաբաժնով նախատեսված «ածելի» ապրանքը մատակարարել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և Պայմանագրի 8.11 կետը՝ ««Հաղթանակ» շուրջօրյա խնամքի կենտրոն» ՊՈԱԿ -ը մասնակի միակողմանի լուծում է ««Հաղթանակ» շուրջօրյա խնամքի կենտրոն» ՊՈԱԿ ի և «ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ-ի միջև 2025 թվականի մարտի 13-ին կնքված N «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/6-ԵԽ-1-ՀԿ» համաձայնագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ պայմանագիրը կհամարվի մասնակի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը պատվիրատուի կողմից պաշտոնական տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրվանից:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին:

Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Այսպիսով, «ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ -ին տրվում է 10 /տասը/ օրացուցային օր՝ տուժանքներով սահմանված որակավորման՝ 50155 / հիսուն հազար մեկ հարյուր հիսունհինգ / դրամ և պայմանագրի 33436 /երեսուներեք հազար չորս հարյուր երեսունվեց/ դրամ ապահովումների գումարները ««Հաղթանակ» շուրջօրյա խնամքի կենտրոն» ՊՈԱԿ -ի Կենտրոնական գանձապետարանի Հ/Հ «900008000466» և «900008000664» հաշվեհամարներին փոխանցելու նպատակով:

Սահմանված ժամկետում գումարները չվճարելու դեպքում, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն, «ԷՎԱ ԲԵՍԹ» ՍՊԸ ՍՊԸ-ին կազմակերպությանն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին, իսկ Կատարողի կողմից պայմանագիր կնքելու նպատակով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, կներկայացվեն Կատարողի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ Հ. ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող Լ. Ադիբեկյան
0081 ք. Երևան, Հաղթանակ 2 փողոց, տուն 45,
Էլ. փոստ tuninternat1@mail.ru հեռ. 060650892